

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԳԱԳԻԿԻ

ԷԹՆՈ-ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԻՐԱՆ-ԱԴՐԲԵՋԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2025

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ТАДЕВОСЯН СУРЕН ГАГИКОВИЧ

ЭТНО-РЕЛИГИОЗНЫЕ ФАКТОРЫ В ПРОЦЕССЕ РЕГИОНАЛЬНОГО
РАЗВИТИЯ ИРАНО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЙ

Диссертация на соискание научной степени кандидата политических наук
по специальности 23.00.02 “Политические институты и процессы”

АВТОРЕФЕРАТ

ЕРЕВАН-2025

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Քեոյան Գարիկ Միշայի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Քոչարյան Տիգրան Տոնիկի

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շահվերդյան Առլեն Մայիսի


Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի եվրոպական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 14:30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգսիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հոկտեմբերի 20-ին:

ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի 056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, քաղաքական
գիտությունների թեկնածու, դոցենտ  **Սարգսյան Առնակ Գեորգիի**

Тема диссертации утверждена в **Ереванском государственном университете**

Научный руководитель: доктор политических наук, профессор
Керян Гарик Мишаевич

Доктор политических наук, профессор
Кандидат политических наук, доцент
Ведущая организация **Кочарян Тигран Тонинович
Шахвердян Арлен Маисович
Европейский университет Армении**


Защита состоится 26 ноября 2025 г. в 14:30 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА. Адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.

Автореферат разослан 20 октября 2025г.

Научный секретарь

специализированного совета 056 МОНКС КВОН РА,

кандидат политических наук, доцент  **Саргсян Арнак Георгиевич**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը. Խորհրդային Միության փլուզումից հետո Հարավային Կովկասը վերածվել է գլոբալ և տարածաշրջանային ուժային կենտրոնների շահերի բախման թատերաբեմի, որտեղ սերտորեն շաղկապվել են էներգետիկ անվտանգության, տրանսպորտային հաղորդուղիների, չկարգավորված հակամարտությունների և աշխարհաքաղաքական ազդեցության համար պայքարի հիմնախնդիրները: Տարածաշրջանային այս բարդ իրողության պայմաններում Իրան-Ադրբեջան հարաբերություններն առանձնանում են իրենց բազմաշերտությամբ, հակասականությամբ և տարածաշրջանային անվտանգության կառուցակարգերի վրա ունեցած էական ազդեցությամբ: Իրանի հյուսիսային սահմանին անկախ Ադրբեջանի հռչակումը, տարածաշրջանային նոր իրողություններ ձևավորելուց զատ, ի սկզբանե պայմանավորել է երկու պետությունների միջև փոխհարաբերությունների մրցակցային բնույթը: Այն պայմանավորված է եղել պետականաշինության, արտաքին քաղաքական վեկտորների և տարածաշրջանային դերակատարման վերաբերյալ նրանց սկզբունքային տարաձայնություններով:

Մեր թեմայի ուսումնասիրության արդիականությունը բխում է մի քանի փոխկապակցված իրողություններից: Իրանն իր արտաքին քաղաքականությամբ ձգտում է վերահաստատել իր պատմական դերը ձևավորվող բազմաբևեռ աշխարհակարգում՝ այդպիսով ուղղակի ներազդելով Հարավային Կովկասի և հարակից տարածաշրջանների անվտանգային միջավայրի վրա: Միևնույն ժամանակ, Ադրբեջանը, հետապնդելով միջին տերության և կարևորագույն էներգետիկ և տրանսպորտային հանգույցի կարգավիճակ, հետևողական քայլեր է ձեռնարկում միջազգային հարթակներում իր սուբյեկտայնությունն ամրապնդելու ուղղությամբ: Հետևաբար, նրանց արտաքին քաղաքական վարքագծի խորքային դրդապատճառների, ինքնաընկալումների և հայեցակարգային ուղենիշների վերլուծությունն անհրաժեշտ նախապայման է ոչ միայն երկկողմ հարաբերությունների բարդությունը, այլև դրանցով պայմանավորված տարածաշրջանային լայն գործընթացներն ըմբռնելու համար:

Իրան-Ադրբեջան հարաբերություններում տասնամյակներ շարունակ կուտակված լարվածությունը թևակոխել է որակապես նոր, առավել վտանգավոր փուլ հատկապես 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմից և դրա արդյունքում Հարավային Կովկասում ուժային հարաբերակցության կտրուկ վերափոխումից հետո: Ադրբեջանի ընդլայնվող ռազմաքաղաքական

հավակնությունները, Թուրքիայի հետ ռազմավարական դաշինքի խորացումը և Իսրայելի հետ բազմաշերտ գործընկերությունը պաշտոնական Թեիրանի կողմից ընկալվում են որպես ուղղակի մարտահրավեր Իրանի ազգային անվտանգությանն ու տարածաշրջանային դիրքերին: Մյուս կողմից, Իրանի հետևողական հակաարևմտյան ուղեգիծը, Իսրայելի հետ վատթարացող հարաբերություններն ու տարածաշրջանային կապուղիների վերաբերյալ «կարմիր գծերը» Բաքվում ընկալվում են իբրև շարունակական մտահոգության աղբյուր: Սպառնալիքների այս փոխադարձ ընկալումները և հակազդեցության ռազմավարությունները ստեղծում են անվտանգության երկընտրանքի դասական իրավիճակ՝ պարբերաբար սրելով երկկողմ լարվածությունը և մեծացնելով տարածաշրջանային անկայունության վտանգը: Հետևաբար, տարածաշրջանի անվտանգային միջավայրն ըմբռնելու և կանխատեսելու տեսանկյունից այս հարաբերությունների բարդ տեղաշարժերի, դրանց հիմքում ընկած դրդապատճառների և ընկալումների վերլուծությունն ունի գործնական նշանակություն:

Թեման առանձնահատուկ արդիականություն ունի նաև տարածաշրջանի այլ երկրների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության դիտանկյունից: Հայաստանի անվտանգությունն ու արտաքին քաղաքական միջավայրն էապես ենթարկվում են այս երկու պետությունների հարաբերությունների վիճակի ազդեցությանը: Իրան-Ադրբեջան լարվածության սրումը կամ, հակառակը, հնարավոր իրավիճակային մերձեցումը կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Հայաստանի անվտանգային ճարտարապետության ձևավորման, տրանսպորտային կապուղիների անվտանգության և արտաքին սպառնալիքներին դիմագրավելու ռազմավարության վրա: Հետևաբար, Իրան-Ադրբեջան հարաբերությունների խորքային վերլուծությունը, դրանց շարժառիթների բացահայտումն ու հնարավոր զարգացումների նախանշումը կենսական նշանակություն ունեն Հայաստանի արտաքին քաղաքականության մշակման և ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից:

Հիմնախնդրի գիտական մշակվածությունը. Իրան-Ադրբեջան հարաբերությունները, դրանց առանձին ասպեկտներն ու զարգացման փուլերը բազմիցս հայտնվել են ինչպես տարածաշրջանային (իրանցի, ադրբեջանցի, թուրք, հայ), այնպես էլ միջազգային (արևմտյան, ռուսաստանցի) հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այս թեմայով առկա գիտական գրականությունը կարելի է պայմանականորեն խմբավորել մի քանի հիմնական ուղղություններով:

Առաջին և, թերևս, ամենածավալուն խումբն ընդգրկում է հարաբերությունների աշխարհաքաղաքական և անվտանգային չափումների վերլուծությանը նվիրված աշխատությունները: Տարբեր հեղինակներ (օրինակ, Ս. Քորնել¹, Շ. Հանթեր²³, Մ. Քուի-Էսֆահանի⁴) քննում են երկու երկրների մրցակցությունն ու դիրքորոշումների փոխակերպումները տարածաշրջանային հակամարտությունների (հատկապես՝ արցախյան հակամարտության) նկատմամբ և վերլուծում արտաքին դերակատարների (Ռուսաստան, Թուրքիա, ԱՄՆ, Իսրայել) ազդեցությունը երկկողմ հարաբերությունների վրա: Երկրորդ ուղղությունն առավելապես կենտրոնացնում է տնտեսական, էներգետիկ և տրանսպորտային գործոնների վրա՝ վերլուծելով Կասպից ծովի ռեսուրսների շուրջ մրցակցությունը, էներգետիկ ենթակառուցվածքների (օրինակ՝ Հարավային գազային միջանցքի) զարգացումը և միջազգային պատժամիջոցների ազդեցությունը (Մ. Չազիզա⁵, Դ. Օ'Բրայան⁶, Բ. Շաֆեր⁷): Երրորդ ուղղությունն ընդգրկում է պատմական, մշակութային և ինքնութենական հարցերը: Այս շրջանակներում

¹ **Տե՛ս** Svante E. Cornell, *Azerbaijan since Independence*, Studies of Central Asia and the Caucasus (Armonk, N.Y: M.E. Sharpe, 2011).

² **Տե՛ս** Shireen Hunter, *The Transcaucasus in Transition: Nation-Building and Conflict*, Significant Issues Series, v. 16, no. 7 (Washington, D.C: Center for Strategic and International Studies, 1994).

³ **Տե՛ս** Shireen T Hunter, "Iran and the Spread of Revolutionary Islam," *Third World Quarterly* 10, no. 2 (April 1988): <https://doi.org/10.1080/01436598808420079>.

⁴ **Տե՛ս** Marzieh Kouhi-Esfahani, *Iran's Foreign Policy in the South Caucasus: Relations with Azerbaijan and Armenia*, Durham Modern Middle East and Islamic World Series 47 (London New York: Routledge, 2019).

⁵ **Տե՛ս** Mordechai Chaziza, "The Impact of U.S. Sanctions on Iran's Engagement and Integration in the Belt and Road Initiative," *Digest of Middle East Studies* 29, no. 2 (November 2020), <https://doi.org/10.1111/dome.12215>.

⁶ **Տե՛ս** David O'Byrne, "Iran Sanctions Herald Energy Trouble for Caucasus Nations | Eurasianet," November 8, 2018, <https://eurasianet.org/iran-sanctions-herald-energy-trouble-for-caucasus-nations>.

⁷ **Տե՛ս** Brenda Shaffer, *Borders and Brethren: Iran and the Challenge of Azerbaijani Identity* (Cambridge, Mass.: MIT Press, 2002).

հետազոտողները (օրինակ՝ Ա. Յոդիկե⁸, Ա. Յունուսով⁹, Բ. Բալքի¹⁰, Հ. Ահմադի¹¹, Բ. Շաֆեր¹², Ռ. Գալյան¹³, Ն. Մեհդիյեվա¹⁴, Վ. Բայբուրդյան¹⁵, Ա. Փաշայան¹⁶, Ս. Բեդֆորդ¹⁷, Ա.Իսրայելյան¹⁸) վերլուծում են պատմական ժառանգության, էթնիկ գործոնի («Հարավային Ադրբեջանի» խնդիր), կրոնի և ազգային ինքնության կառուցման մրցակցային պատումների դերը Իրանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականության կամ երկկողմ հակասությունների ձևավորման գործում: Իրանի պատմության առանցքային դրվագները մանրամասն հետազոտել է Ե. Աբրահամյանը¹⁹, իսկ Ադրբեջանում ինքնության

⁸ **Տե՛ս** Ansgar Jödicke, “Shia Groups and Iranian Religious Influence in Azerbaijan: The Impact of Trans-Boundary Religious Ties on National Religious Policy,” *Eurasian Geography and Economics* 58, no. 5 (September 3, 2017), <https://doi.org/10.1080/15387216.2017.1413579>.

⁹ **Տե՛ս** Ариф Юнусов, *Ислам в Азербайджане* (Баку: Заман, 2004), <https://www.ipd-az.org/wp-content/uploads/2020/06/Islam-az-rus.pdf>.

¹⁰ **Տե՛ս** Bayram Balci, “Islam et tolérance en Azerbaïdjan : réalité historique et usage politiques,” *Bulletin de l’Observatoire international du religieux* 14 (2017), <https://obsreligion.cnrs.fr/bulletin/islam-et-tolerance-en-azerbaïdjan-realite-historique-et-usage-politiques/>.

¹¹ **Տե՛ս** Hamid Ahmadi, “The Clash of Nationalisms: Iranian Response to Baku’s Irredentism,” in *The Great Game in West Asia: Iran, Turkey and the South Caucasus*, ed. Mehran Kamrava (Oxford University Press, 2017), <https://doi.org/10.1093/oso/9780190673604.003.0005>.

¹² **Տե՛ս** Brenda Shaffer, *Iran Is More than Persia: Ethnic Politics in Iran* (Berlin Boston: De Gruyter, 2023).

¹³ **Տե՛ս** Rouben Galichian, *The Invention of History: Azerbaijan, Armenia, and the Showcasing of Imagination*, Second, revised and expanded edition (London : Yerevan, Armenia: Gomitas Institute ; Printinfo Art Books, 2010),

¹⁴ **Տե՛ս** Nazrin Mehdiyeva, *Power Games in the Caucasus: Azerbaijan’s Foreign and Energy Policy towards the West, Russia and the Middle East*, Library of International Relations 49 (London New York: I.B. Tauris, 2011).

¹⁵ **Տե՛ս** Վահան Բայբուրդյան, “Իրան–Ադրբեջան. Հարևաններ՝ Թե՛ր Աշխարհաքաղաքական Ու Աշխարհատնտեսական Ախյաններ,” Արևելագիտական ժողովածու, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXII (2003).

¹⁶ **Տե՛ս** Արաքս Փաշայան, Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան (Երևան: «Նորավանք» ԳԿՀ., 2014), 87.

¹⁷ **Տե՛ս** Sofie Bedford, *Islamic Activism in Azerbaijan: Repression and Mobilization in a Post-Soviet Context* (Stockholm : Huddinge: Department of Political Science, Stockholm University ; Södertörns högskola, 2009), <https://su.diva-portal.org/smash/get/diva2:200259/FULLTEXT01.pdf>.

¹⁸ **Տե՛ս** Արմեն Իսրայելյան, “Իրանի Տարածքային Ամբողջականությանը Սպառնացող Մարտահրավերներն Իսլամական Հեղափոխությունից Հետո,” Արևելագիտության Հարցեր, no. 12 (2016).

¹⁹ **Տե՛ս** Ervand Abrahamian, *A History of Modern Iran*, 1st ed. (Cambridge University Press, 2008), <https://doi.org/10.1017/CBO9780511984402>.

կառուցման, ժողովրդավարության հետընթացի և արտաքին քաղաքական գծի կոշտացումը՝ Օ. Ալտշտադտը²⁰, որոնց դիտարկումները ևս արժեքավոր նշանակություն են ունեցել մեր աշխատանքի համար:

Այնուամենայնիվ, առկա գրականության քննական վերլուծությունը վկայում է, որ չնայած առանձին ասպեկտների մանրամասն ուսումնասիրությանը՝ հաճախ բացակայում է այնպիսի համալիր, տեսականորեն հիմնավորված մոտեցում, որը հնարավորություն կտար համակարգային ուսմանակալ վերլուծել գաղափարական, ինքնութենական, պատմական և աշխարհաքաղաքական այս գործոնների փոխազդեցությունն ու դրանց համակցված ազդեցությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա: Շատ ուսումնասիրություններ կրում են պատմագիտական-ժամանակագրական բնույթ կամ կենտրոնանում են առանձին գործոնների վրա կոնկրետ պատմական ժամանակահատվածում: Հատկապես սակավաթիվ են այն աշխատանքները, որոնք փորձել են այս հարաբերությունները քննել միջազգային հարաբերությունների սոցիալ-կոնստրուկտիվիստական տեսությունների, մասնավորապես՝ դերերի տեսության դիտանկյունից: Այս տեսությունը, կենտրոնանալով պետությունների ինքնընկալումների, փոխադարձ ակնկալիքների և սոցիալական փոխազդեցության վրա, առաջարկում է երկկողմ հարաբերությունների տարբեր ենթաշերտերը բացատրող կարևոր վերլուծական գործիք:

Սույն ատենախոսությունը նպատակ ունի լրացնելու հենց այս *տեսական և էմպիրիկ բացը* և առաջարկել երկու երկրների բազմաբարդ փոխգործակցության համակարգային վերլուծություն՝ հիմնված նրանց արտաքին քաղաքական ընկալումների ձևավորման, փոխակերպման, վիճարկման և փոխազդեցության ուսումնասիրության վրա:

Հետազոտության օբյեկտը և առարկան. հետազոտության օբյեկտը Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների բարդ և փոխակերպվող *համակարգն է՝* դիտարկված դրա *ձևավորման և զարգացման* համատեքստում՝ 1991 թվականից մինչև 2025 թվականի զարուն ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության առարկան այդ երկու պետությունների կողմից որդեգրված արտաքին քաղաքական ինքնաընկալումների, աշխարհաքաղաքական կողմնորոշումների և տարածաշրջանային

²⁰ **Տե՛ս** Audrey Altstadt, *Frustrated Democracy in Post-Soviet Azerbaijan* (Columbia University Press, 2017), 8–10, <https://doi.org/10.7312/alts70456>.

դերակատարման վերաբերյալ պատկերացումների ձևավորման, փոխակերպման և մրցակցային փոխազդեցության բարդ գործընթացն է: Այն ընդգրկում է նաև փոխադարձ ընկալումների և դրանցից բխող ռազմավարական վարքագծի դրսևորումը երկկողմ հարաբերությունների տարբեր հարթություններում, ինչպես նաև դրանց՝ որպես մրցակցությունն ու լարվածությունը պայմանավորող հիմնական փոփոխականի վերլուծությունը: Ավելին, առարկայի անբաժանելի մասն են կազմում նաև այն գաղափարական, կրոնական, ինքնութենական և աշխարհաքաղաքական-համակարգային պատճառականները, որոնք ներազդում են այս ընկալումների կառուցման և փոխադարձ վիճարկման վրա:

Հետազոտության նպատակը և խնդիրները. ատենախոսության նպատակն է միջազգային հարաբերությունների դերերի տեսության հայեցակարգային շրջանակի կիրառմամբ բացահայտել և համակողմանիորեն վերլուծել Իրան-Ադրբեջան հարաբերությունների զարգացման շարժընթացը (1991-2025 թթ.)՝ քննության առնելով երկու երկրների արտաքին քաղաքական ինքնաընկալումների և տարածաշրջանային դերակատարման պատկերացումների ձևավորման, էվոլյուցիայի և փոխազդեցության օրինաչափությունները, ինչպես նաև երկկողմ մրցակցության և լարվածության հիմնապատճառները:

Այս նպատակին համենելու համար սահմանվել են ստորև ներկայացված խնդիր-հարցադրումները.

1. Հիմնավորել միջազգային հարաբերությունների դերերի տեսության մեթոդական կիրառելիությունն ու վերլուծական արժեքն Իրան-Ադրբեջան հարաբերությունների համալիր քննության համար:
2. Սահմանել դերերի տեսության հիմնական հասկացությունները և դրանց կիրառման մեթոդաբանությունն ատենախոսության շրջանակում:
3. Վերլուծել Իրանի պատմական ժառանգության (Սեֆյան, Ղաջարական, Փահլավիների շրջաններ) դերը և վերաիմաստավորումը հետհեղափոխական Իրանի արտաքին քաղաքական ինքնության և հայեցակարգային պատկերացումների ձևավորման գործում:
4. Քննության առնել 1979թ. Իսլամական հեղափոխության արդյունքում Իրանի ազգային ինքնության և արտաքին քաղաքական կողմնորոշումների արմատական վերաձևակերպման գործընթացը և դրա հիմնական գաղափարական բաղադրիչները:

5. *Վեր հանել* Իրանի արտաքին քաղաքական ընկալումների և վարքագծի փոխակերպումները հետհեղափոխական շրջանում՝ անդրադառնալով պրագմատիզմի և գաղափարական հետևողականության միջև առկա հակասություններին:
6. *Գնահատել* Իրանի արտաքին քաղաքական վարքագծի առանձնահատկությունները միջուկային ճգնաժամի, միջազգային պատժամիջոցների և տարածաշրջանային խորացող անկայունության համատեքստում:
7. *Վեր հանել* հետխորհրդային Ադրբեջանում ազգային ինքնության կառուցման գաղափարական-քաղաքական հիմքերը, պատմական ժառանգության վերաիմաստավորման գործընթացը և դրանց ազդեցությունը անկախության առաջին տարիներին երկրի արտաքին քաղաքական կողմնորոշումների և մոտեցումների ձևավորման վրա:
8. *Քննել* Հեյդար Ալիևի կառավարման շրջանում Ադրբեջանի որդեգրած բազմավեկտոր արտաքին քաղաքականության, «ադրբեջանականություն» հայեցակարգի ներդրման և պետական համակարգի կենտրոնացման նախապայմաններն ու հետևանքները:
9. *Վերլուծել* Իլիամ Ալիևի նախագահության սկզբնական շրջանում Ադրբեջանի որդեգրած արտաքին քաղաքական առաջնահերթությունները և բազմավեկտոր քաղաքականության պահպանման մոտեցումները:
10. *Վերլուծել* Ադրբեջանի արտաքին քաղաքականության հայեցակարգային մոտեցումների փոխակերպումը, տարածաշրջանային հավակնությունների աճը և դրա գործնական դրսևորումը՝ հատկապես 2020թ. պատերազմի շրջանում և դրանից հետո:
11. *Ցույց տալ* Իրան-Ադրբեջան հարաբերություններում կրոնագաղափարական հակասությունների դերը Իրանի կրոնական ազդեցության փորձերի և Ադրբեջանի հակազդեցության համատեքստում:
12. *Պարզել* պատմական հիշողության և էթնոքաղաքական գործոնների ներգործության աստիճանը երկկողմ հարաբերությունների վրա՝ վեր հանելով մրցակցային պատումների և էթնիկ փոքրամասնություններին վերաբերող հարցերի քաղաքական գործիքավորման մեխանիզմները:

13. *Գնահատել* աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոնների համալիր ազդեցությունն Իրան-Ադրբեջան փոխգործակցության վրա:
14. Կատարված վերլուծության հիման վրա *ձևակերպել* հիմնավորված եզրահանգումներ Իրան-Ադրբեջան հարաբերությունների բնույթի, մրցակցության շարժիչ ուժերի և տարածաշրջանային անվտանգության համար դրանց նշանակության վերաբերյալ:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը միջազգային հարաբերությունների դերերի տեսությունն է՝ դիտարկված կոնստրուկտիվիզմի հայեցակարգային շրջանակում:

Հետազոտության մեթոդաբանությունը հենվում է *որակական վերլուծության սկզբունքների* վրա՝ նպատակ ունենալով ապահովել ուսումնասիրվող երևույթների խորքային և համատեքստային ըմբռնում: Հետազոտությունը հիմնված է առաջնային և երկրորդային սկզբնաղբյուրների լայն շրջանակի վրա՝ ներառյալ պաշտոնական փաստաթղթեր, քաղաքական գործիչների ելույթներ ու հարցազրույցներ, զանգվածային լրատվության միջոցների նյութեր, ինչպես նաև *բազմալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն, պարսկերեն, ադրբեջաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, պորտուգալերեն)* ակադեմիական գրականություն և վերլուծական զեկույցներ:

Այս էմպիրիկ բազայի վերլուծության համար համադրվել է հետազոտական գործիքների համալիր զինանոց: **Պատմական վերլուծությունը** հնարավորություն է տվել հետազոտելու երկու երկրների արտաքին քաղաքական կողմնորոշումների և փոխհարաբերությունների պատմական էվոլյուցիան: **խոսույթի (դիսկուրսի) վերլուծությունը** և դրանից ճյուղավորվող **շրջանակման վերլուծությունը** (Framing Analysis) կիրառվել են ոչ միայն գերիշխող պատկերացումներն ու ազգային պատումները վերլուծելու, այլև պաշտոնական հոետորաբանության և քաղաքականության վերլուծության միջոցով տարածության, սպառնալիքի և ինքնության մրցակցային կառուցակարգերում ներդրված ուժային հարաբերությունները բացահայտելու համար: Սրանք լրացվել են **հայեցակարգային պատմության** (Conceptual History) մոտեցմամբ՝ առանցքային հասկացությունների վիճարկվող իմաստներն ու դրանց զարգացումը քննելու համար:

Իրանի և Ադրբեջանի արտաքին քաղաքական մոտեցումների միջև առկա ընդհանրություններն ու հակասությունները բացահայտվել են **կառուցվածքային-կենտրոնացված համեմատության** (Structured, Focused Comparison) միջոցով, իսկ **գործընթացի հետպազման** (Process Tracing) մեթոդը կիրառվել է առանցքային իրադարձությունների

պատճառահետևանքային մեխանիզմները վեր հանելու նպատակով: Այս ամենը տեղադրվել է **համակարգային վերլուծության** լայն համատեքստում՝ հաշվի առնելով տարածաշրջանային և գլոբալ գործոնների փոփոխվող ազդեցությունը: Այսպիսով, որդեգրված տեսամեթոդական համադրությունը նպատակ ունի ապահովելու Իրան-Ադրբեջան հարաբերությունների ուսումնասիրության համալիր, նորարական մոտեցում՝ հիմնված ինչպես կառուցվածքային, այնպես էլ գաղափարական և նորմատիվ գործոնների վերլուծության վրա:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է մի քանի հանգամանքով: Նախևառաջ, այն ներկայացնում է Իրան-Ադրբեջան հարաբերությունների հետխորհրդային ողջ ժամանակաշրջանի (1991-2025 թթ.) առաջին համակարգային ուսումնասիրություններից մեկը՝ հիմնված միջազգային հարաբերությունների դերերի տեսության հայեցակարգային և մեթոդական գործիքակազմի վրա:

Ատենախոսության գիտական նորույթը կարելի է ներկայացնել հետևյալ դրույթներով.

- բացահայտվել են Իրանի արտաքին քաղաքական ինքնության գաղափարական հիմքերը և հայեցակարգային վերափոխումները, դրանց վերափմաստավորումը իսլամական վարչակարգի ռազմավարական ընկալումների համատեքստում:
- Հայաստանյան քաղաքագիտական գրականության մեջ առաջին անգամ փորձ է արվել նորովի ներկայացնել Իրանի արտաքին քաղաքականությունը «առավելագույն ճնշման» և խորացող տարածաշրջանային անկայունության պայմաններում:
- Տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից մանրամասն ներկայացվել են ադրբեջանական ազգային ինքնության գաղափարական-քաղաքական հիմքերը և պատմական ժառանգության վերափմաստավորումը:
- Բացահայտվել ու ներկայացվել են Ադրբեջանի արտաքին քաղաքական մոտեցումների ձևավորումն ու տարածաշրջանային դերակատարման նոր ընկալումները, արտաքին քաղաքականության կոշտացումն ու տարածաշրջանային աճող հավակնությունները:
- Ատենախոսության շրջանակներում վեր են հանվել տարածաշրջանային էներգետիկ ինտեգրացիոն գործընթացների և տնտեսական կարողությունների աճի ազդեցությունը և արտաքին քաղաքական հայեցակարգային նոր մոտեցումների ձևավորումը:

- Իրանի կրոնական ազդեցության դրսևորումների և Ադրբեջանում կրոնի քաղաքականացման փորձերի համատեքստում քննության է առնվել Իրան-Ադրբեջան հարաբերություններում «Հարավային Ադրբեջանի» հիմնախնդիրը:
- Գնահատվել է աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոնների ազդեցությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների շարժընթացի վրա:
- Կատարվել է Իրան-Ադրբեջան հակասությունների ինտեգրատիվ վերլուծություն՝ համադրելով գաղափարական-կրոնական, պատմա-ինքնութենական և աշխարհաքաղաքական-համակարգային գործոնները մեկ ընդհանուր տեսական շրջանակում: Սա հնարավորություն է ընձեռել ցույց տալու այս տարբեր հարթություններում առկա խնդիրների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը երկու երկրների արտաքին քաղաքական վարքագծի և մրցակցային հարաբերությունների ձևավորման վրա:
- Հետազոտության ընդգրկում էմպիրիկ բազան թույլ է տվել ներկայացնել Իրան-Ադրբեջան հարաբերությունների արդիականացված պատկերը՝ հաշվի առնելով տարածաշրջանում տեղի ունեցած վերջին տեղաշարժերը և դրանց ազդեցությունը երկու երկրների դիրքորոշումների ու ռազմավարությունների վրա:
- Նորույթ է նաև աշխատանքում կիրառված խոսույթի վերլուծության և այլ որակական մեթոդների համադրումը, ինչը թույլ է տվել վեր հանել երկու երկրների էլիտաների ընկալումներն ու պատումները:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը

բազմակի է: Այն, նախևառաջ, հարստացնում է միջազգային հարաբերությունների դերերի տեսության կիրառական դաշտը՝ ընդգծելով դրա վերլուծական ներուժը Հարավային Կովկասի նման բարդ տարածաշրջանի առանցքային հարաբերություններից մեկի ուսումնասիրման համար: Աշխատանքը նպաստում է նաև կոնստրուկտիվիստական մոտեցումների զարգացմանը տարածաշրջանային հակամարտությունների և մրցակցության վերլուծության ոլորտում՝ ընդգծելով ինքնության, ընկալումների և նորմերի դերը աշխարհաքաղաքական գործընթացներում: Ավելին, Իրանի և Ադրբեջանի արտաքին քաղաքական դերերի փոխազդեցության համեմատական վերլուծությունն առաջարկում է նոր մեկնաբանություններ ինքնության և արտաքին քաղաքականության փոխկապակցվածության, ինչպես նաև այս տարածաշրջանի պետությունների արտաքին քաղաքականության

հայեցակարգային մոտեցումների ձևավորման առանձնահատկությունների վերաբերյալ: Այն կարող է խթանել հետագա տեսական և էմպիրիկ հետազոտությունները այս ուղղություններով:

Աշխատանքի կիրառական նշանակությունը պայմանավորված է ուսումնասիրվող հարաբերությունների առանցքային դերով Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության և Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության համար: Ատենախոսության շրջանակում կատարված վերլուծությունն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացում ներգրավված պետական կառույցների, վերլուծական կենտրոնների և փորձագիտական շրջանակների համար: Այն կարող է նպաստել Իրանի և Ադրբեջանի մտադրությունների և հնարավոր վարքագծի ավելի խորքային ըմբռնմանը՝ թույլ տալով ավելի ճշգրիտ գնահատել տարածաշրջանային ռիսկերը և մշակել արդյունավետ հակազդման կամ հարմարվողականության ռազմավարություններ: Ավելին, ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել նաև կոնֆլիկտաբանության և տարածաշրջանային հետազոտությունների ոլորտում՝ որպես ինքնության վրա հիմնված միջպետական հակասությունների կառավարման և վերլուծության օրինակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները. ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները զեկուցվել և քննարկվել են ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի նախաձեռնած «Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների» ամենամյա երկրորդ գիտաժողովի (2024), ԵՊՀ և ԵԳՀ համապատասխան ուղղությունների կրթական ծրագրերում կազմակերպված դասընթաց-քննարկումների, ինչպես նաև ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնած **Դոկտորական դպրոցի** շրջանակում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են յոթ գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը. ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս հիմնական գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի **ներածությունում** հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացվում են տեսամեթոդական հիմքը, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի փորձարկման և կառուցվածքի մասին տեղեկություններ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից և եզրակացությունից:

Առաջին գլուխը՝ **«Աշխատանքի տեսահայեցակարգային հիմքը. դերերի տեսությունը միջազգային հարաբերություններում և դրա կիրառելիությունն Իրան-Ադրբեջան հարաբերությունների համատեքստում»**, նվիրված է հետազոտության տեսական հիմնավորմանը, որի նպատակն է ստեղծել ամուր հայեցակարգային հենք Իրան-Ադրբեջան հարաբերությունների բարդ համակարգի վերլուծության համար:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ **«Դերերի տեսության ինտեգրումն ու զարգացումը միջազգային հարաբերությունների տեսական շրջանակում»**, ներկայացվում է դերերի տեսության զարգացումը՝ որպես այլընտրանք միջազգային հարաբերությունների ավանդական դպրոցներին: Աշխատանքում քննադատվում է ռեալիզմի «բիլիարդի գնդակների» մոդելը, որը պետություններին դիտարկում է որպես միատարր ռացիոնալ միավորներ՝ անտեսելով նրանց ներքին առանձնահատկությունները, մշակութային գործոնները և ինքնությունը: Ի հակադրություն այս մոտեցման՝ 1960-70-ական թվականներին Ջեյմս Ռոզենաուի և հատկապես Քալկի Հոլստիի կողմից մշակված դերերի տեսությունը արտաքին քաղաքականության վերլուծության կիզակետում է դնում «ազգային դերի հայեցակարգը» (ԱԴՀ): Այն սահմանվում է որպես պետության որոշում կայացնողների կողմից սեփական երկրի դիրքի, առաքելության և պարտավորությունների մասին ունեցած պատկերացումների համախումբ, որը գործում է որպես արտաքին քաղաքականության «ներքին կողմնացույց»: Ենթագլխում մանրամասն վերլուծվում է ԱԴՀ-ների երկակի բնույթը: Մի կողմից՝ դրանք բնութագրվում են զգալի կայունությամբ, ինչը պայմանավորում է արտաքին քաղաքականության կանխատեսելիությունն ու հետևողականությունը: Մյուս կողմից՝ ԱԴՀ-ները դինամիկ են և կարող են ենթարկվել փոփոխությունների ներքին գործոնների (իշխանափոխություններ, գաղափարական տեղաշարժեր) կամ արտաքին ցնցումների ազդեցությամբ: Որպես վառ օրինակ՝ բերվում է 1979թ. Իրանի իսլամական հեղափոխությունը, որը երկրի դերը «ԱՄՆ-ի դաշնակցից» արմատապես վերափոխեց «հակակայսերական առաջնորդի»: Ենթագլխին ամփոփվում է դերերի տեսության և կոնստրուկտիվիզմի սերտ կապի հիմնավորմամբ, քանի որ երկու մոտեցումներն էլ ընդգծում են ինքնությունների, նորմերի և գաղափարների սոցիալական կառուցվածք լինելու հանգամանքը:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Դերերի տեսության կիրառելիությունը Ադրբեջանի և Իրանի արտաքին քաղաքականության և երկկողմ հարաբերությունների համատեքստում»**, հիմնավորվում է տեսության ընտրությունը՝ ցույց տալով ավանդական տեսությունների բացատրական սահմանափակումները տվյալ դեպքի ուսումնասիրության համար: Ռեալիզմը, կենտրոնանալով ուժային հավասարակշռության վրա, չի կարողանում ամբողջությամբ բացատրել հարաբերությունների հոգեբանական, մշակութային ու պատմական այն նրբերանգները, որոնք հաճախ նույնքան ազդեցիկ են, որքան զուտ ուժային հաշվարկները: Լիբերալ տեսությունը, որը շեշտադրում է տնտեսական փոխկախվածությունը, նույնպես ի վիճակի չէ բացատրել, թե ինչու, չնայած համընկնող տնտեսական շահերին, կողմերը չեն կարողանում ձևավորել կայուն վստահության մթնոլորտ: Ենթագլխում ցույց է տրվում, որ դերերի տեսությունը լրացնում է այս բացը՝ վերլուծության կիզակետում դնելով երկու պետությունների կողմից ձևավորված հակադիր դերային ինքնությունների մրցակցությունը՝ Ադրբեջանի՝ աշխարհիկ, թյուրքական և հետխորհրդային, և Իրանի՝ իսլամական, հեղափոխական և քաղաքակրթական հիմքերի վրա հենված ինքնությունների բախումը:

Երկրորդ գլխից՝ **«Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության կրոնական և քաղաքական հայեցակարգերը»**, խորամուխ է լինում Իրանի արտաքին քաղաքական ինքնության, դերային ընկալումների և հայեցակարգային մոտեցումների բարդ ու հակասական էվոլյուցիայի վերլուծության մեջ՝ սկսած 1979 թվականի Իսլամական հեղափոխությունից:

Երկրորդ գլխի առաջին՝ **«Իրանի արտաքին քաղաքական ինքնության գաղափարական հիմքերը և դրանց վերահիմաստավորումը 1979թ. հեղափոխությունից հետո»** ենթագլխում վերլուծվում են այն պատմական խորքային շերտերը, որոնք ձևավորել են Իրանի ազգային ինքնագիտակցությունը և վերահիմաստավորվել հեղափոխությունից հետո: Աշխատանքում քննվում է Սեֆյանների դերը շիիզմը որպես պետական կրոն և ազգային ինքնության հիմք ամրագրելու գործում, Ղաջարական շրջանում Ռուսական և Բրիտանական կայսրությունների ճնշման տակ կրած տարածքային կորուստներն ու նվաստացումները, որոնք սնել են հակաիմպերիալիստական տրամադրություններ, ինչպես նաև 1953թ. Մոսադեղի դեմ իրականացված հեղաշրջումը, որը խորացրել է անվստահությունն Արևմուտքի նկատմամբ: Այս պատմական ժառանգության ֆոնին ցույց է տրվում 1979թ. հեղափոխության արմատական շրջադարձը, երբ շահի՝ «Արևմուտքի դաշնակցի» և «տարածաշրջանային ժանդարմի» դերը մերժվեց և փոխարինվեց նոր՝ իսլամական-հեղափոխական ինքնությամբ: Այս նոր ինքնության գաղափարական սյուներն էին Այաթոլլա Խոմեյնիի կողմից մշակված «վիլայեթ-է-ֆադիի» (իրավագետ-կրոնագետի խնամակալություն) դոկտրինը, «ո՛չ Արևելք, ո՛չ Արևելք» սկզբունքը, «ճնշվածների» (մուստազաֆների) պաշտպանության առաքելությունը և արմատական

հակասիոնիզմը: Ենթադրվում նաև ներկայացվում է, թե ինչպես Իրան-իրաքյան պատերազմը (1980-1988) վերածվեց «Սրբազան պաշտպանության»՝ ամրապնդելով «հայրենիքի և հավատքի պաշտպանի» դերային կերպարը:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Արտաքին քաղաքականության հայեցակարգային վերափոխումները հետհեղափոխական շրջանում»**, ներկայացվում է հեղափոխական գաղափարախոսության և պրագմատիկ անհրաժեշտությունների միջև առկա մշտական լարումը: Ցույց է տրվում, որ նախագահ Ռաֆսանջանի կառավարման շրջանը (1989-1997) բնորոշվում էր պատերազմից հետո տնտեսական վերականգնմանն ուղղված պրագմատիզմով, ինչը դրսևորվեց արաբական երկրների, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունների մասնակի կարգավորմամբ: Այնուհետև վերլուծվում է նախագահ Խաթամիի (1997-2005) կողմից առաջ քաշված «Քաղաքակրթությունների երկխոսության» հայեցակարգը՝ որպես Իրանը «երկխոսող և հանդուրժողական մշակույթ ներկայացնող ուժի» կերպարով ներկայացնելու փորձ: Այս մոտեցումը, սակայն, խոչընդոտվեց ինչպես ներքին պահպանողական ուժերի դիմադրության, այնպես էլ ԱՄՆ-ի կողմից Իրանը «չարիքի առանցքի» մաս հռչակելուց հետո: Ի հակադրություն այս մոտեցումների՝ քննության է առնվում նախագահ Ահմադինեժադի (2005-2013) կառավարման շրջանը, որը նշանավորվեց հեղափոխական սկզբունքներին վերադարձով, միջուկային ծրագրի արագացմամբ, կոշտ հակաիսրայելական հռետորաբանությամբ և Իրանը որպես «համաշխարհային Հարավի» և «հակաիմպերիալիստական պայքարի» առաջնորդ դիրքավորելու ձգտմամբ:

Գլխի երրորդ ենթագլխում՝ **«Իրանի արտաքին քաղաքականությունը Ռոհանիի նախագահության շրջանում. միջուկային համաձայնագրի ձեռքբերումն ու դրա իրականացման արտաքին սահմանափակումները»** վերնագրով, քննվում է 2013-2021թթ. ժամանակահատվածը, որը սկսվեց միջազգային մեկուսացումը հաղթահարելու հանրային պահանջի ֆոնին: Վերլուծվում է Ռոհանիի «խոհեմության և չափավորության» քաղաքականությունը, որը հնարավոր դարձավ Գերագույն առաջնորդ Խամենեիի կողմից առաջ քաշված «հերոսական ճկունության» հայեցակարգի շնորհիվ: Այս քաղաքականության գլխավոր նվաճումը դարձավ 2015թ. միջուկային համաձայնագիրը (ԳՀՀԾ), որը ներկայացվում է որպես Իրանի՝ «կառուցողական և պատասխանատու գործընկերոջ» դերը ստանձնելու փորձ: Միևնույն ժամանակ, ցույց է տրվում Իրանի երկակի քաղաքականությունը. մինչ մի կողմից բանակցություններ էին ընթանում Արևմուտքի հետ, մյուս կողմից Իրանն ակտիվորեն ամրապնդում էր իր դիրքերը Սիրիայում և Իրաքում՝ պայքարելով «Իսլամական պետության» դեմ և պահպանելով «Դիմադրության առանցքի գլխավոր հենասյան» դերը: Ենթադրվում վերլուծվում են նաև 2018թ. ԱՄՆ-ի՝ ԳՀՀԾ-ից դուրս գալու հետևանքները, որոնք զրոյացրին Ռոհանիի ջանքերը և հանգեցրին արտաքին քաղաքականության կրկին կոշտացմանը:

Գլխի չորրորդ՝ **«Իրանի արտաքին քաղաքականությունը «առավելագույն ճնշման» և խորացող տարածաշրջանային անկայունության պայմաններում. Արևմուտքի հետ առճակատման նոր փուլն ու «դեպի Արևելք» հայեցակարգի ամրապնդումը»** ենթագլխում վերլուծվում են վերջին տարիների զարգացումները: Ներկայացվում է Իրանի պատասխանը «առավելագույն ճնշման» քաղաքականությանը՝ «առավելագույն դիմադրության» տեսքով, որը դրսևորվեց ուրանի հարստացման մակարդակի կտրուկ բարձրացմամբ (մինչև 60%) և միջուկային ծրագրի զարգացմամբ: Քննարկվում է «դեպի Արևելք» ռազմավարական շրջադարձը, որն ամրագրվեց Չինաստանի հետ 25-ամյա համապարփակ համաձայնագրով և Ուկրաինայում պատերազմի համատեքստում Ռուսաստանի հետ ռազմատեխնիկական համագործակցության խորացմամբ: Ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև ներքին լարվածությանը, մասնավորապես՝ «Կին, կյանք, ազատություն» շարժմանը՝ որպես «ներքին դերային վիճարկման» դրսևորում, և վերջին շրջանի ռազմավարական ցնցումներին՝ 2024թ. ապրիլին Իսրայելի հետ ուղղակի ռազմական բախմանն ու նույն թվականի դեկտեմբերին Սիրիայում Ասադի վարչակարգի անկմանը, որոնք լրջագույն մարտահրավեր են նետում Իրանի տարածաշրջանային դիրքերին և դերային ինքնընկալմանը:

Ատենախոսության երրորդ՝ **«Արտաքին քաղաքականության հայեցակարգային մոտեցումների ձևավորումն ու փոխակերպումներն Ադրբեջանի Հանրապետությունում»** գլուխն ուսումնասիրում է Ադրբեջանի դերային ընկալումների զարգացումը:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Ադրբեջանական ազգային ինքնության գաղափարական-քաղաքական հիմքերը և պատմական ժառանգության վերաիմաստավորումը»**, վերլուծվում է հետխորհրդային ինքնության կառուցման գործընթացը՝ խորհրդային շրջանի ժառանգությունը (այլութենի փոփոխություններ) և հակահայկականության՝ որպես պետական գաղափարախոսության առանցքային տարրի դերը: Պաշտոնական պատմագրությունը նպատակային կերպով առաջ է մղել այն տեսությունը, թե իբր տարածաշրջանի քրիստոնեական ժառանգությունն «աղվանական» է, ինչը գործիքայնացվել է հայկական պատմական ներկայությունը վիճարկելու համար: Իշխող վերնախավի համար ինքնության այս կառուցումը վերածվել է ներքին լեգիտիմությունն ամրապնդելու և հասարակությանը «ընդհանուր թշնամու» դեմ համախմբելու կարևորագույն գործիքի:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Ադրբեջանի արտաքին քաղաքական մոտեցումների ձևավորումն ու տարածաշրջանային դերակատարման նոր ընկալումները (1991-2003 թթ.)»**, ներկայացվում են անկախության առաջին տարիների արտաքին քաղաքական որոնումները՝ Էլչիբեյի արմատական պանթուրքիզմից և իրեդենտիզմից («Հարավային Ադրբեջան») մինչև Հեյդար Ալիևի կողմից որդեգրված պրագմատիկ, բազմակետոր քաղաքականություն, որը հիմնված էր «ադրբեջանականություն» (*Azərbaycançılıq*) հայեցակարգի և

«Դարի պայմանագրի» վրա: Էլեիբեյի կտրուկ հակառուսական և հակաիրանական քաղաքականությունը, զուգորդված ռազմական անհաջողություններով, հանգեցրեց նրա վարչակազմի տապալմանը: Ի տարբերություն նրա՝ Հեյդար Ալիևը վարում էր հավասարակշռման քաղաքականություն՝ մի կողմից վերադառնալով ԱՊՀ կազմ՝ Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու համար, մյուս կողմից՝ ամրապնդելով կապերն Արևմուտքի հետ էներգետիկ ոլորտում:

Գլխի երրորդ՝ « **Տարածաշրջանային էներգետիկ ինտեգրացիոն գործընթացների և տնտեսական կարողությունների աճի ազդեցությունը և արտաքին քաղաքական հայեցակարգային նոր մոտեցումների ձևավորումը**» ենթագլխում ցույց է տրվում, թե ինչպես նավթային եկամուտների աճը նպաստեց Բաքվի ավելի ինքնավստահ քաղաքականության որդեգրմանն ու նոր դերերի («էներգետիկ հանգույց», «քաղաքակրթությունների կամուրջ») ձևավորմանը, որոնք առաջ մղվեցին Հեյդար Ալիևի հիմնադրամի և «Խավիարային դիվանագիտության» միջոցով: Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Հարավային գազային միջանցքի նման ռազմավարական նախագծերը ոչ միայն նյութականացրին «էներգետիկ գործընկերոջ» դերը, այլև կտրուկ մեծացրին երկրի ֆինանսական և ռազմական կարողությունները: Միևնույն ժամանակ, արտաքին աշխարհում հանդուրժողականության կերպար ստեղծելուն զուգահեռ, վարչակարգը հետևողականորեն կոշտացնում էր վերահսկողությունը երկրի ներսում՝ որդեգրելով «ինքնիշխանության անզիջում պաշտպանի» դերը՝ ի պատասխան մարդու իրավունքների վերաբերյալ արևմտյան քննադատության:

Գլխի չորրորդ ենթագլխում՝ «**Արցախյան երկրորդ պատերազմից հետո Ադրբեջանի արտաքին քաղաքականության կոշտացումն ու տարածաշրջանային աճող հավակնությունները**» վերնագրով, քննվում է 2020թ. հետո տեղի ունեցած արմատական փոփոխությունը, երբ Ադրբեջանը ստանձնեց «հաղթանակած պետության» և «նոր իրողություններ թելադրողի» դերը՝ ինստիտուցիոնալացնելով դաշինքը Թուրքիայի հետ (Շուշիի հռչակագիր) և որպես ճնշման գործիք օգտագործելով «Ձանգեզուրի միջանցքի» և «Արևմտյան Ադրբեջան» նարատիվները: Ռազմական հաղթանակը լեգիտիմացվեց որպես ուժի միջոցով ՄԱԿ-ի բանաձևերի «կատարում» և «պատմական արդարության վերականգնում», ինչը դարձավ վարչակարգի ներքին և արտաքին քաղաքականության հիմնաքարը: Այս ինքնավստահությունը հետագայում ամրապնդվեց փոփոխված աշխարհաքաղաքական համատեքստով, մասնավորապես՝ Ուկրաինայում Ռուսաստանի ներգրավվածությամբ և ադրբեջանական գազի նկատմամբ Եվրոպայի աճող պահանջարկով, ինչը թուլացրեց Բաքվի վրա արտաքին ճնշումները:

Չորրորդ՝ **«Իրան-Ադրբեջան հակասությունների կրոնազաղափարական, էթնոքաղաքական և համակարգային չափումները**» գլխում խորամուխ ենք եղել երկկողմ մրցակցության

հիմնապատճառների բացահայտման մեջ՝ վերլուծելով դրանք երեք փոխկապակցված հարթություններում: Հիմնավորել ենք, թե ինչպես են գաղափարական անհամատեղելիությունը, պատմական խորքային հակասությունները և աշխարհաքաղաքական գործոնների ճնշումը միահյուսվում՝ ձևավորելով կայուն լարվածության և փոխադարձ անվստահության միջավայր:

Գլխի առաջին ենթագլխում՝ **«Իրանի կրոնական ազդեցության դրսևորումներն ու կրոնի քաղաքականացման փորձերն Ադրբեջանում»**, մանրամասն քննության է առնվում պետականաշինության երկու հակադիր մոդելների բախումը՝ Իրանի թեոկրատական, հեղափոխական շիա ինքնության և Ադրբեջանի հետևողականորեն աշխարհիկ պետության կառուցման քաղաքականության միջև: Վերլուծվում են Իրանի կողմից իր «փափուկ ուժը» տարածելու կոնկրետ մեխանիզմները, այդ թվում՝ ադրբեջանցի երիտասարդներին Ղոմի կրոնական կենտրոններում կրթություն տրամադրելը, իրանամետ կրոնական կազմակերպությունների (մասնավորապես՝ «Ադրբեջանի իսլամական կուսակցություն») ֆինանսավորումն ու գաղափարական հովանավորությունը, ինչպես նաև մեդիա քարոզչությունը՝ Բաքվի աշխարհիկ քաղաքականությունը քննադատելու նպատակով: Ի հակադրություն դրա՝ ներկայացվում է Ադրբեջանի հակազդման համակարգված ռազմավարությունը, որը դրսևորվել է 1990-ականների կեսերից իսլամական կուսակցության արգելումով ու դրա առաջնորդների ձերբակալությամբ, Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեի ստեղծմամբ՝ կրոնական կյանքի նկատմամբ պետական լիակատար վերահսկողություն հաստատելու համար, և 2015թ. Նաբոդարանի կրոնական համայնքի դեմ իրականացված ուժային գործողությամբ:

Կրոնաքաղաքական այս հակադրությանը զուգահեռ՝ ոչ պակաս սուր դրսևորումներ ունի երկկողմ հարաբերությունների էթնոքաղաքական չափումը, որը վերլուծվում է գլխի երկրորդ՝ **«Էթնոքաղաքական հակասությունները Իրան-Ադրբեջան հարաբերություններում. «Հարավային Ադրբեջանի» հիմնախնդիրը»** ենթագլխում: Ենթագլխից բացահայտում է խնդրի պատմական խորքային արմատները՝ սկսած 19-րդ դարի Գյուլիստանի և Թուրքմենշայի պայմանագրերից, որոնք Արաքս գետը դարձրին քաղաքական սահմանագիծ, և 1918թ. հյուսիսում ստեղծված պետության կողմից «Ադրբեջան» անվան ընտրությունից, որն ի սկզբանե Թեհրանում ընկալվեց որպես ծավալապաշտական հավակնություն: Յուրյ է տրվում, որ Իրանի մտավախությունները խորացան 1945-46թթ.: Իրանի հյուսիսում խորհրդային զորքերի կողմից ստեղծված «Ադրբեջանի Ժողովրդական կառավարության» փորձով, որը Թեհրանի հիշողության մեջ ամրագրվեց որպես արտաքին ուժերի կողմից հրահրվող անջատողականության վառ օրինակ:

Որպես լարվածության դրսևորումներ՝ վերլուծվում են 2006թ. «ծաղրանկարային սկանդալը» Իրանում, որն առաջացրեց իրանական աղրբեջանցիների զանգվածային բողոքի ցույցեր, և 2020թ. պատերազմից հետո խնդրի կտրուկ սրացումը՝ պայմանավորված նախագահ Էրդողանի կողմից Բաքվի զորահանդեսին արտասանած բանաստեղծությամբ և նախագահ Ալիևի 2022թ. հայտարարությամբ՝ «Իրանում բնակվող աղրբեջանցիների իրավունքները պաշտպանելու» վերաբերյալ, ինչը Թեհրանը որակեց որպես ուղղակի միջամտություն իր ներքին գործերին:

Վերջապես, **գլխի երրորդ՝ «Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային գործոնների ազդեցությունն Իրան-Աղրբեջան հարաբերությունների շարժընթացի վրա» ենթագլխում** գնահատվում է, թե ինչպես են երկկողմ հակասությունները խորանում և գործիքայնացվում երրորդ դերակատարների կողմից: Այստեղ մանրամասն վերլուծվում է Աղրբեջան-Իսրայել ռազմավարական գործընկերությունը, որի շրջանակներում Իսրայելը հանդիսանում է Աղրբեջանի սպառնալուծության հիմնական մատակարարներից մեկը, իսկ Թեհրանն իր հերթին Աղրբեջանը դիտարկում է որպես Իրանի դեմ հետախուզական և ռազմական գործողությունների հնարավոր հարթակ: Առանձին քննարկվում է Թուրքիայի գործոնը. ցույց է տրվում, որ Շուշիի հռչակագրով ամրագրված թուրք-աղրբեջանական ռազմավարական դաշինքն Իրանի կողմից ընկալվում է որպես պանթուրքիստական սպառնալիք և իրեն ռազմավարական շրջափակման ենթարկելու փորձ: Գնահատվում է նաև Ռուսաստանի դերի փոփոխությունը 2022թ. հետո: ՌԴ աշխարհաքաղաքական դերի թուլացումը Կովկասում համարձակություն է հաղորդել Բաքվին՝ միաժամանակ խթանելով Իրան-Ռուսաստան իրավիճակային մերձեցումը: Ենթագլխի եզրափակիչ մասում քննության է առնվում Իրան-Աղրբեջան աշխարհատնտեսական մրցակցությունը՝ կենտրոնանալով տրանսպորտային միջանցքների շուրջ նրանց պայքարի վրա: Ներկայացվում է Աղրբեջանի կողմից առաջ մղվող «Միջին միջանցքի» և այսպես կոչված «Ջանգեզուրի միջանցքի» նախագիծը, որին Իրանը կտրուկ հակադրվում է՝ այն դիտարկելով որպես Հայաստանի հետ իր ցամաքային կապը խզելու և տարածաշրջանային մեկուսացման սպառնալիք՝ դրա փոխարեն առաջ մղելով «Հյուսիս-Հարավ» միջանցքի իր այլընտրանքային տեսլականը:

Եզրակացությունում ամփոփվում են հետազոտության հիմնական արդյունքները: Աշխատանքը վերահաստատում է կենտրոնական փաստարկն առ այն, որ Իրան-Աղրբեջան հարաբերություններում արձանագրված կայուն մրցակցության հիմքում ընկած են ոչ թե զուտ իրավիճակային շահերի բախումներ, այլ երկու պետությունների որդեգրած արտաքին քաղաքական ինքնությունների և դերային պատկերացումների կառուցվածքային անհամատեղելիությունը, որը դրսևորվում է կրոնագաղափարական, էթնոքաղաքական և աշխարհաքաղաքական հարթություններում: Այս անհամատեղելիությունը վերարտադրում է անվտանգության երկընտրանք և

սահմանափակում երկկողմ հարաբերություններում իրական հաշտեցման հեռանկարները: Վերջում ուրվագծվում են հետագա հետազոտությունների հնարավոր ուղղությունները և ձևակերպվում կիրառական առաջարկներ ՀՀ արտաքին քաղաքականության պլանավորման համար:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված հետևյալ գիտական հոդվածներում.

1. Թադևոսյան Ս. «Արցախյան հակամարտության ուղղությամբ Իրանի Իսլամական Հանրապետության վարած միջնորդական քաղաքականությունը 1992-1994 թվականներին» // Տարածաշրջան և աշխարհ: 2022, № 2 (13): էջ 25-30:
2. Tadevosyan S. "Disputes between the Islamic Republic of Iran and the Republic of Azerbaijan over the Artsakh conflict after the signing of the Bishkek ceasefire agreement" // Տարածաշրջան և աշխարհ: 2022, № 3 (13): pp. 17-21.
3. Թադևոսյան Ս. «Իրանի կրոնական ազդեցության և «փափուկ ուժի» դրսևորումները հետխորհրդային Ադրբեջանում» // Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես: 2022, № 2 (19): էջ 162-174:
4. Tadevosyan S. "Balancing Powers: Azerbaijan's National Role Conceptions Amidst Regional And Global Challenges" // Contemporary Eurasia: International Journal of Eurasian Geopolitics. 2024, Vol. XIII (1): pp. 6-21.
5. Tadevosyan S. "National Role Conceptions and Regional Rivalry: The Dynamics of Iran-Azerbaijan Role Conflict in the South Caucasus" // Contemporary Eurasia: International Journal of Eurasian Geopolitics. 2024, Vol. XIII (2): pp. 4-20.
6. Թադևոսյան Ս. «Ազգային դերի հայեցակարգերի ձևավորումն ու փոխակերպումը արդի միջազգային հարաբերություններում» // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն: 2024, Հատոր 15, № 3 (45): էջ 12-25:
7. Tadevosyan S. "A Small State with Growing Influence: Balancing Azerbaijan in Global Energy Policy" // Journal of Political Science: Bulletin of Yerevan University. 2024, Vol. 3, No. 3(9): pp. 34-49.

**ЭТНО-РЕЛИГИОЗНЫЕ ФАКТОРЫ В ПРОЦЕССЕ РЕГИОНАЛЬНОГО
РАЗВИТИЯ ИРАНО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЙ**

Диссертация на соискание научной степени кандидата политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы”. Защита диссертации состоится 26 ноября 2025 г. в 14:30 часов на действующем в ЕГУ специализированном совете 056 "Политология и международные отношения" МОНКС КВОН РА (адрес: РА, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1).

РЕЗЮМЕ

В диссертации исследуются сложные и многогранные ирано-азербайджанские отношения в контексте меняющейся геополитической обстановки на Южном Кавказе. Актуальность данного исследования обусловлена необходимостью глубокого анализа коренных причин устойчивой конкуренции и напряженности между двумя соседними государствами, которая после Второй карабахской войны 2020 года вступила в качественно новую, более опасную фазу. Несмотря на наличие определенного научного интереса к данной теме, в литературе отсутствует комплексный подход, позволяющий системно проанализировать взаимосвязь идеологических, этнополитических и геополитических факторов, лежащих в основе этого противостояния.

Во введении обосновывается актуальность темы, определяются объект, предмет, цель и задачи исследования, а также формулируются теоретико-методологические основы, научная новизна, теоретическая и практическая значимость диссертации.

В первой главе **«Теоретико-концептуальная основа работы: теория ролей в международных отношениях и ее применимость в контексте ирано-азербайджанских отношений»** рассматриваются теоретические основы исследования. В ней анализируется теория ролей как альтернатива традиционным школам международных отношений, а также обосновывается ее аналитическая ценность для изучения ирано-азербайджанских отношений, позволяющая выявить глубинные, основанные на идентичности и восприятии, движущие силы конфликта.

Во второй главе **«Религиозные и политические концепции внешней политики Исламской Республики Иран»** анализируется эволюция внешнеполитической идентичности и концептуальных подходов Ирана после

Исламской революции 1979 года. В главе прослеживаются трансформации от революционного идеализма к прагматизму, а затем к новому витку конфронтации в условиях политики «максимального давления», что в итоге привело к укреплению концепции «поворота на Восток».

В третьей главе **«Формирование и трансформации концептуальных подходов во внешней политике Азербайджанской Республики»** исследуется процесс становления и эволюции внешнеполитической идентичности Азербайджана. В ней рассматриваются идеологические основы государственного строительства, переход от хаотичного периода ранней независимости к прагматичной многовекторной политике Гейдара Алиева, а также последующее ужесточение внешнеполитического курса и рост региональных амбиций после 2020 года.

В четвертой главе **«Религиозно-идеологические, этнополитические и системные измерения ирано-азербайджанских противоречий»** представлен комплексный анализ трех ключевых плоскостей конфликта. В ней подробно рассматриваются столкновение между теократической моделью Ирана и светской государственностью Азербайджана, этнополитические трения, связанные с проблемой «Южного Азербайджана» и конкурирующими историческими нарративами, а также влияние системных геополитических факторов, включая роль Турции, Израиля и России.

**ETHNO-RELIGIOUS FACTORS IN THE PROCESS OF REGIONAL
DEVELOPMENT OF IRAN-AZERBAIJAN RELATIONS**

Dissertation under 23.00.02 “Political Institutions and Processes,” aspiring to earn Ph.D. in Political Sciences. The defense of the dissertation will take place on the 26th of November, 2025, at 14:30 at the Specialized Council 056 “Political Sciences and International Relations” of the RA MoESCS HESC, operating at Yerevan State University (Address: RA, Yerevan, 0025, 1 Alex Manoogian).

SUMMARY

The dissertation examines the complex and often contradictory relationship between Iran and Azerbaijan within the shifting geopolitical landscape of the South Caucasus. The relevance of this research is driven by the necessity to analyze the root causes of the enduring rivalry, which has entered a new and more dangerous phase following the 2020 Nagorno-Karabakh war. Although existing scholarship has explored various facets of these relations, it has lacked a comprehensive, theoretically grounded approach that systemically integrates the ideological, ethno-political, and geopolitical factors that shape the conflict.

The introduction establishes the relevance of the topic, defines the objectives and scope of the research, and formulates the theoretical and methodological foundations, scientific novelty, and theoretical and practical significance of the dissertation.

The first chapter, **“The Theoretical-Conceptual Basis of the Work: Role Theory in International Relations and Its Applicability in the Context of Iran-Azerbaijan Relations,”** lays out the theoretical framework for the study. It examines Role Theory as a constructivist alternative to traditional IR theories, emphasizing how states' foreign policies are shaped by their identity, self-perceptions, and socially constructed roles. The chapter substantiates the theory's value in explaining the deep-seated, identity-driven competition between Iran and Azerbaijan that material factors alone cannot fully account for.

The second chapter, **“Religious and Political Concepts of the Foreign Policy of the Islamic Republic of Iran,”** traces the evolution of Iran's foreign policy identity and conceptual approaches since the 1979 Islamic Revolution. It analyzes the radical shift from the Shah's pro-Western, secular role to a new revolutionary identity based on anti-imperialism, Shi'a ideology, and regional leadership ambitions. The chapter examines the subsequent transformations

through different presidential administrations, culminating in the current "Look to the East" strategy adopted in response to international pressure and regional instability.

The third chapter, **“Formation and Transformations of Conceptual Approaches of Foreign Policy in the Republic of Azerbaijan,”** investigates the development of Azerbaijan's post-Soviet foreign policy identity and regional role. It covers the initial nation-building process, the establishment of a pragmatic, multi-vector foreign policy under Heydar Aliyev anchored by energy resources, and the evolution toward a more assertive and ambitious regional posture under Ilham Aliyev. The chapter highlights the radical hardening of Baku's foreign policy and its adoption of a "victorious state" narrative following the 2020 war.

The fourth chapter, **“Religious-Ideological, Ethno-Political, and Systemic Dimensions of Iran-Azerbaijan Contradictions,”** provides a multi-layered analysis of the conflict's core drivers. It dissects the fundamental clash between Iran's theocratic model and Azerbaijan's staunch secularism, the ethno-political tensions surrounding the "South Azerbaijan" issue and competing historical narratives, and the profound impact of systemic geopolitical factors, including the strategic roles of Turkey, Israel, and Russia in shaping the bilateral rivalry.

